



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

31 հոկտեմբերի 2017 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2/2
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2-ՐԴ ՆԻՍԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու **62** անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Ս. Մարգարյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետի տեղակալները, քաղաքապետի գլխավոր խորհրդականը, քաղաքապետի խորհրդականները, Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը, աշխատակազմի քարտուղարի տեղակալները, աշխատակազմի անշարժ գույքի կառավարման, զարգացման և ներդրումային ծրագրերի, իրավաբանական, կազմակերպական, տրանսպորտի, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությունների պետերը և ՀՀ ժողովրդական արտիստ, Երևանի ավագանու նախկին անդամ Հրանտ Թոխատյանը:

Երևանի քաղաքապետ Ս. Մարգարյանը ներկայացրեց Երևանի ավագանու **2017** թվականի հոկտեմբերի **31**-ի նիստի օրակարգի նախագիծը.

1. Երևանի ավագանու **2**-րդ նստաշրջանի **2**-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Պայմանագրի գործողության ժամկետը երկարացնելու մասին:
3. Պայմանագրի գործողության ժամկետը երկարացնելու մասին:
4. «Էքստերիեր Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին:
5. «Անուր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին:
6. Երևան քաղաքի ավագանու **2011** թվականի փետրվարի **8**-ի N **182**-Ն, **2011** թվականի մարտի **15**-ի N**193**-Ն, **2012** թվականի հունիսի **26**-ի N**472**-Ն և **2015** թվականի մարտի **18**-ի N**304**-Ա որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
7. «Արվեստի այբուբեն» մշակութային հիմնադրամի Երևան քաղաքի Ազատության պողոտայի **հ.19** հասցեում գտնվող մշակույթի կենտրոնի մշակութային գործունեության և վերանորոգման ծրագրին հավանություն տալու, «Արաբկիրի մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված գույքը հետ վերցնելու և անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու, «Արաբկիրի մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը լուծարելու մասին:
8. Երևանի քաղաքապետի **2017** թվականի հոկտեմբերի **12**-ի N **3572**-Ա որոշումը և «Երևանի Նոր Նորք վարչական շրջանի մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին:
9. Երևան քաղաքի ավագանու **2013** թվականի սեպտեմբերի **10**-ի N**45**-Ն և **2013** թվականի սեպտեմբերի **10**-ի N**46**-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին:
10. Երևանի զարգացման **2018-2022** թվականների հնգամյա ծրագրի հաստատման մասին:

Օրակարգի նախագծի վերաբերյալ հարցեր ուղղեցին.

1. Արայիկ Հարությունյան - Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ
 2. Տիգրան Ավինյան - Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ
 3. Մարինա Խաչատրյան - Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ
- Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Ս. Մարգարյանը:

1. ԼՍԵՑԻՆ - Երևանի ավագանու 2-րդ նստաշրջանի 2-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 62 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 59, դեմ՝ 3, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

2. ԼՍԵՑԻՆ - Պայմանագրի գործողության ժամկետը երկարացնելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Ամյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր ուղղեցին.

1. Արայիկ Հարությունյան - Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ
 2. Անի Սամսոնյան - Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ
 3. Մարինա Խաչատրյան - Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ
- Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Ս. Մարգարյանը և աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա. Ամյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Ե. Ազարյանը տեղեկացրեց, որ «Պայմանագրի գործողության ժամկետը երկարացնելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

1. Արայիկ Հարությունյան - Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ
2. Սոննա Աղեկյան - Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ
3. Հովիկ Մուսայելյան – Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1.Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականություն համարվող Փ. Բուզանդի փողոցի 1/3 հասցեում գտնվող վարչական շենքից «Հայրենական ապրանքարտադրողների միավորում» հասարակական կազմակերպությանը տրամադրված 53.5 քմ և 89.3 քմ մակերեսներով տարածքների անհատույց օգտագործման պայմանագրի գործողության ժամկետը երկարացնել մինչև 2020 թվականի հոկտեմբերի 30-ը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 62 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 44, դեմ՝ 17, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

3. ԼՍԵՑԻՆ - Պայմանագրի գործողության ժամկետը երկարացնելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Ամյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Ձեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Ե. Ազարյանը տեղեկացրեց, որ «Պայմանագրի գործողության ժամկետը երկարացնելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1. Անահիտ Բախշյան – Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ

2. Ալինա Քուշկյան - Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցություն

ՈՐՈՇՎԵՑ – 1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Փ. Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող շենքի 6-րդ հարկի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.02082016-01-0176 վկայական) «Ֆրիտոյֆ Նանսեն» հիմնադրամին տրամադրված 109.7քմ մակերեսով տարածքի անհատույց օգտագործման պայմանագրի գործողության ժամկետը երկարացնել մինչև 2020 թվականի հոկտեմբերի 30-ը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 62 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 59, դեմ՝ 3, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

4. ԼՍԵՑԻՆ - «Էքստերիեր Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Հենրիկ Նավասարդյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Ձեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարց ուղղեց.

1. Մերգեյ Ղահրամանյան – Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Հ. Նավասարդյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Ե. Ազարյանը տեղեկացրեց, որ ««Էքստերիեր Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 4 անդամ.

1. Մարինա Խաչատրյան – Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ

2. Սոննա Աղեկյան - Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ

3. Մերգեյ Ղահրամանյան – Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ

4. Դավիթ Խաժակյան – Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության ղեկավար

ՈՐՈՇՎԵՑ – Թույլատրել «Էքստերիեր Գրուպ» ՍՊԸ-ին սույն որոշման հավելվածում նշված տարածքում և սահմանված պայմաններով կազմակերպել ծառայողական ավտոկայանատեղ:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 62 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 59, դեմ՝ 3, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

5. ԼՍԵՑԻՆ - «Անուր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին:

ՁԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Հենրիկ Նավասարդյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Ձեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Ե. Ագարյանը տեղեկացրեց, որ «Անուր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովի նախագահ Ե. Ագարյանին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու **1** անդամ.

1. Ալեն Սիմոնյան – Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ

Բարձրագված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Ե. Ագարյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑՅՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու **5** անդամ.

1. Սերգեյ Ղահրամանյան – Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ

2. Դավիթ Խաժակյան – Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության ղեկավար

3. Մարինա Խաչատրյան – Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ

4. Սոննա Աղեկյան – Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ

5. Գրիգոր Սինասյան – Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – Թույլատրել «Անուր» ՍՊԸ-ին սույն որոշման հավելվածում նշված տարածքում և սահմանված պայմաններով կազմակերպել ծառայողական ավտոկայանատեղ:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու **62** անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ` **58**, դեմ` **3**, ձեռնպահ` **1**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

6. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու **2011** թվականի փետրվարի **8**-ի **N182**-Ն, **2011** թվականի մարտի **15**-ի **N193**-Ն, **2012** թվականի հունիսի **26**-ի **N472**-Ն և **2015** թվականի մարտի **18**-ի **N304**-Ա որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

ՁԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զավեն Առաքելյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Ձեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Ե. Ագարյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու **2011** թվականի փետրվարի **8**-ի **N182**-Ն, **2011** թվականի մարտի **15**-ի **N193**-Ն, **2012** թվականի հունիսի **26**-ի **N472**-Ն և **2015** թվականի մարտի **18**-ի **N304**-Ա որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑՅՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթնի համար գրանցվել է ավագանու **1** անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեց.

1. Մարինա Խաչատրյան – Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – **1.** Երևան քաղաքի ավագանու **2011** թվականի փետրվարի **8**-ի «Երևանի ենթակայության կազմակերպությունները Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարների ենթակայությանը հանձնելու և լիազորություններ պատվիրակելու մասին» **N 182**-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1) 2-րդ կետում «3-րդ կետով սահմանված դեպքի» բառերը փոխարինել «3-րդ և 4-րդ կետերով սահմանված դեպքերի» բառերով.

2) լրացնել 4-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«4. Այն դեպքում, երբ Երևանի ենթակայության կազմակերպության գործադիր մարմինը դիմում է ներկայացնում Երևանի քաղաքապետին՝ իր հետ կնքած աշխատանքային պայմանագիրը լուծելու (պաշտոնից ազատելու) մասին, ապա կազմակերպության գործադիր մարմինը պաշտոնից ազատվում է Երևանի քաղաքապետի որոշման հիման վրա:»:

2. Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի մարտի 15-ի «Երևանի ենթակայության մի շարք փակ բաժնետիրական ընկերություններ Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարների ենթակայությանը հանձնելու և լիազորություններ պատվիրակելու մասին» N 193-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները.

1) 2-րդ կետում «բացառությամբ» բառից հետո լրացնել «սույն որոշման 3-րդ և 4-րդ կետերով սահմանված դեպքերի,» բառերը.

2) լրացնել 3-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Երևանի ենթակայության փակ բաժնետիրական ընկերության գործունեության վերահսկողության արդյունքում իրավական ակտերի պահանջների այնպիսի խախտումներ հայտնաբերելու դեպքում, որոնք, համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի, հիմք են հանդիսանում փակ բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի հետ կնքված աշխատանքային պայմանագրի լուծման համար, կազմակերպության գործադիր մարմինը պաշտոնից ազատվում է Երևանի քաղաքապետի որոշման հիման վրա:»:

3) լրացնել 4-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«4. Այն դեպքում, երբ Երևանի ենթակայության փակ բաժնետիրական ընկերության գործադիր մարմինը դիմում է ներկայացնում Երևանի քաղաքապետին՝ իր հետ կնքած աշխատանքային պայմանագիրը լուծելու (պաշտոնից ազատելու) մասին, ապա փակ բաժնետիրական ընկերության գործադիր մարմինը պաշտոնից ազատվում է Երևանի քաղաքապետի որոշման հիման վրա:»:

3. Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի հունիսի 26-ի «Երևանի ենթակայության կազմակերպությունները Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարների ենթակայությանը հանձնելու և լիազորություններ պատվիրակելու մասին» N472-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1) 2-րդ կետում «3-րդ կետով սահմանված դեպքի» բառերը փոխարինել «3-րդ և 4-րդ կետերով սահմանված դեպքերի» բառերով.

2) լրացնել 4-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«4. Այն դեպքում, երբ Երևանի ենթակայության կազմակերպության գործադիր մարմինը դիմում է ներկայացնում Երևանի քաղաքապետին՝ իր հետ կնքած աշխատանքային պայմանագիրը լուծելու (պաշտոնից ազատելու) մասին, ապա կազմակերպության գործադիր մարմինը պաշտոնից ազատվում է Երևանի քաղաքապետի որոշման հիման վրա:»:

4. Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի մարտի 18-ի «Երևանի ենթակայության կազմակերպությունները Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարների ենթակայությանը հանձնելու, լիազորություններ պատվիրակելու և Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 25-ի N76-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N304-Ա որոշումը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

18 մարտի 2015թ.

N 304-Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԵՎԱՆ
ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱՎԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՂԵԿՎԱԿԵՐՊՈՒՄԵՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒՅԱՆԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ,
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՏՎԻՐԱԿԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի N 76-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը, ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով և 52-րդ հոդվածի 4-րդ մասով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևանի ենթակայության կազմակերպությունները հանձնել Երևանի վարչական շրջանների ղեկավարների ենթակայությանը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման հավելվածում ընդգրկված կազմակերպությունների մասով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությամբ, 2-րդ մասի ա), գ), դ), ե) և է) կետերով նախատեսված Երևանի քաղաքապետի լիազորությունները, բացառությամբ սույն որոշման 3-րդ և 4-րդ կետերով սահմանված դեպքերի, պատվիրակել Երևանի վարչական շրջանների ղեկավարներին, ընդ որում՝ մինչև սահմանված կարգով մրցույթի արդյունքում կազմակերպության գործադիր մարմնի ընտրությունը (նշանակումը) կազմակերպության գործադիր մարմնի ժամանակավոր պաշտոնակատարի նշանակումը վերջիններս նախապես համաձայնեցնում են Երևանի քաղաքապետի հետ:

3. Երևանի ենթակայության կազմակերպության գործունեության վերահսկողության արդյունքում իրավական ակտերի պահանջների այնպիսի խախտումներ հայտնաբերելու դեպքում, որոնք, համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի, հիմք են հանդիսանում կազմակերպության գործադիր մարմնի հետ կնքված աշխատանքային պայմանագրի լուծման համար, կազմակերպության գործադիր մարմինը պաշտոնից ազատվում է Երևանի քաղաքապետի որոշման հիման վրա:

4. Այն դեպքում, երբ Երևանի ենթակայության կազմակերպության գործադիր մարմինը դիմում է ներկայացնում Երևանի քաղաքապետին՝ իր հետ կնքած աշխատանքային պայմանագիրը լուծելու (պաշտոնից ազատելու) մասին, ապա կազմակերպության գործադիր մարմինը պաշտոնից ազատվում է Երևանի քաղաքապետի որոշման հիման վրա:

5. Ուժը կորցրած ճանաչել Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 25-ի «Երևանի քաղաքապետի 2013 թվականի նոյեմբերի 7-ի N5551-Ա որոշումն ու «Աջափնյակի շախմատի դպրոց» և «Դավթաշենի շախմատի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները հաստատելու մասին» N76-Ա որոշման 3-րդ կետը

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

2015թ. մարտի 18

Երևան»

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 62 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 59, դեմ՝ 3, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

7. **ԼՍԵՑԻՆ** - «Արվեստի այբուբեն» մշակութային հիմնադրամի Երևան քաղաքի Ազատության պողոտայի հ.19 հասցեում գտնվող մշակույթի կենտրոնի մշակութային գործունեության և վերանորոգման ծրագրին հավանություն տալու, «Արաբկիրի մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված գույքը հետ վերցնելու և անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու, «Արաբկիրի մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը լուծարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զավեն Առաքելյանը:

«Արվեստի այբուբեն» մշակութային հիմնադրամի Երևան քաղաքի Ազատության պողոտայի հ.19 հասցեում գտնվող մշակույթի կենտրոնի մշակութային գործունեության և վերանորոգման ծրագրին հավանություն տալու, «Արաբկիրի մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված գույքը հետ վերցնելու և անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու, «Արաբկիրի մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը լուծարելու մասին» ավագանու իրավական ակտի նախագծի

վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց ՀՀ ժողովրդական արտիստ, Երևանի ավագանու նախկին անդամ Հրանտ Թոխատյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Ձեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 5 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր ուղղեցին.

1. Մարինա Խաչատրյան - Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ
2. Սոննա Աղեկյան - Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ
3. Անի Սամսոնյան – Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ
4. Աշոտ Աթյան - Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ
5. Արայիկ Հարությունյան - Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը և քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ջ. Առաքելյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Ե. Ազարյանը տեղեկացրեց, որ «Արվեստի այբուբեն» մշակութային հիմնադրամի Երևան քաղաքի Ազատության պողոտայի հ.19 հասցեում գտնվող մշակույթի կենտրոնի մշակութային գործունեության և վերանորոգման ծրագրին հավանություն տալու, «Արաբկիրի մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության ամրացված գույքը հետ վերցնելու և անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու, «Արաբկիրի մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը լուծարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 8 անդամ.

1. Սոննա Աղեկյան - Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ
2. Մարինա Խաչատրյան - Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ
3. Արայիկ Հարությունյան - Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ
4. Ալեն Սիմոնյան - Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ
5. Զարուհի Բաթոյան - Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ
6. Անահիտ Բախշյան - Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ
7. Միքայել Դովլաթյան – Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ

8. Արա Երջանկյան - Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ

Ամփոփիչ ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետի տեղակալ Ա. Սուքիասյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հավանություն տալ «Արվեստի այբուբեն» մշակութային հիմնադրամի կողմից ներկայացված Երևան քաղաքի Ազատության պողոտայի հ.19 հասցեում գտնվող մշակույթի կենտրոնի մշակութային գործունեության և վերանորոգման ծրագրին՝ համաձայն հավելվածի:

2. «Արաբկիրի մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության ամրացված գույքի կազմից հետ վերցնել Երևան քաղաքի Ազատության պողոտա հ.19 հասցեում գտնվող մշակույթի կենտրոնի շենքը՝ 3100.7 քառ. մետր մակերեսով և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 0.18135 հեկտար հողամասը:

3. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագիրն իրականացնելու նախապայմանով՝ սույն որոշման 2-րդ կետում նշված Երևան համայնքի սեփականություն հանդիսացող գույքը (վկայական 17.07.2013թ. N17072013-01-0231) անհատույց օգտագործման իրավունքով, 10 տարի ժամկետով տրամադրել «Արվեստի այբուբեն» մշակութային հիմնադրամին՝ կնքելով գույքի անհատույց օգտագործման պայմանագիր՝ դրանում նախատեսելով պատասխանատվություն՝ հիմնադրամի կողմից ստանձնած պարտավորությունները (մշակույթի կենտրոնի մշակութային գործունեության և վերանորոգման ծրագիրը) չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

4. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարել «Արաբկիրի մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը:

5. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ «Արաբկիրի մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության լուծարման աշխատանքներն իրականացնելու նպատակով ստեղծել լուծարման հանձնաժողով:

6. «Արաբկիրի մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքը հանձնել «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի տնօրինությանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 62 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 59, դեմ՝ 3, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

ԸՆԴՄԻՉՈՒՄ.

Նիստը վերսկսվեց ժամը 14.00-ին:

8. **ԼՍԵՑԻՆ** - Երևանի քաղաքապետի 2017 թվականի հոկտեմբերի 12-ի N 3572-Ա որոշումը և «Երևանի Նոր Նորք վարչական շրջանի մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետի տեղակալ Վ. Նիկոյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Ե. Ազարյանը տեղեկացրեց, որ «Երևանի քաղաքապետի 2017 թվականի հոկտեմբերի 12-ի N 3572-Ա որոշումը և «Երևանի Նոր Նորք վարչական շրջանի մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1. Սոննա Ադեկյան - Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ

2. Մարինա Խաչատրյան – Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ
Ամփոփիչ էլույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետի տեղակալ Վ. Նիկոյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել.

1) Երևանի քաղաքապետի 2017 թվականի հոկտեմբերի 12-ի «ՀՀ համայնքային արտադարձական կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն» «Երևանի Նոր Նորք վարչական շրջանի ուսումնամեթոդական, գիտաարտադրական կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը միացման ձևով վերակազմակերպելու մասին» N3572-Ա որոշումը,

2) «Երևանի Նոր Նորք վարչական շրջանի մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 62 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 59, դեմ՝ 3, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

9. **ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի N45-Ն և 2013 թվականի սեպտեմբերի 10-ի N46-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետի տեղակալ Վ. Նիկոյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Ե. Ազարյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի N45-Ն և 2013 թվականի սեպտեմբերի 10-ի N46-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեց.

1. Մարինա Խաչատրյան – Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ
ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի «հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման և դրանց վերաբերյալ Երևան քաղաքի ավագանուն տեղեկատվություն տրամադրելու կարգը հաստատելու մասին» N45-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 10-րդ կետում «քառամյա» բառը փոխարինել «հնգամյա» բառով:

2. Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի «Երևանի քաղաքապետին կից, Երևանի քաղաքային համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները, ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» N 46-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետի 1-ին ենթակետում, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ կետերում «համայնքի զարգացման քառամյա» բառերը փոխարինել «համայնքի զարգացման հնգամյա» բառերով:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 62 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 59, դեմ՝ 3, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

10. ԼՍԵՑԻՆ - Երևանի զարգացման 2018-2022 թվականների հնգամյա ծրագրի հաստատման մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետի տեղակալ Վ. Նիկոյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 8 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր ուղղեցին.

1. Մարինա Խաչատրյան – Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ
2. Արայիկ Հարությունյան – Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ
3. Տիգրան Տեր-Մարգարյան - Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ
4. Դավիթ Խաժակյան - Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության ղեկավար
5. Սերգեյ Դահրամանյան - Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ
6. Անի Սամսոնյան - Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ
7. Զարուհի Բաթոյան - Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ
8. Սոննա Աղեկյան - Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետի տեղակալ Վ. Նիկոյանը:

«Երևանի զարգացման 2018-2022 թվականների հնգամյա ծրագրի հաստատման մասին» ավագանու իրավական ակտի նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Ս. Մարգարյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Ն. Նահապետեյանը տեղեկացրեց, որ «Երևանի զարգացման 2018-2022 թվականների հնգամյա ծրագրի հաստատման մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել է ավագանու **11** անդամ.

1. Սոննա Ադեկյան - Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ
2. Մարինա Խաչատրյան – Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ
3. Անահիտ Բախշյան - Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ
4. Արայիկ Հարությունյան – Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ
5. Տիգրան Ավինյան - Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ
6. Դավիթ Խաժակյան - Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության ղեկավար
7. Անի Սամսոնյան - Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ
8. Նատալյա Լափաուրի – Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն»

խմբակցության անդամ

9. Հասմիկ Սարգսյան - Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ

10. Կամո Արեյան - Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ

11. Զարուհի Բաթոյան - Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ

Ամփոփիչ ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետի տեղակալ Վ. Նիկոյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել Երևանի զարգացման **2018-2022** թվականների հնգամյա ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշմամբ հաստատված Երևանի զարգացման **2018-2022** թվականների հնգամյա ծրագիրը ենթակա է հրապարակման «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի **56**-րդ և **63**-րդ հոդվածներով սահմանված կարգով, իսկ ծրագրի հիմնական ցուցանիշները, վիճակագրական և գրաֆիկական տվյալները նաև առանձին տեղեկատուներով և գրքույկներով՝ ընդհանուր **1000** տպաքանակներով:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու **62** անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ **45**, դեմ՝ **17**, ձեռնպահ՝ **0**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

Երևանի քաղաքապետ Ս. Մարգարյանի առաջարկությամբ որոշվեց Երևանի ավագանու հերթական նիստը գումարել **2017** թվականի նոյեմբերի **29**-ին, ժամը **11.00**-ին:

ԸՆԴՄԻՋՈՒՄ.

Նիստը վերսկսվեց ժամը **16.05**-ին:

Երևանի ավագանու անդամների բանավոր հարցերին տրվեցին պատասխաններ /սղագրությունը կցվում է/:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ